**14. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 120,368.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 150,000.0 հազար դրամի դիմաց, ինչը ավելի է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից 53,428.1 հազար դրամով: Իրականացվել է 12083քմ փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:



**15. Եզրաքարերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 126,930.8 հազար դրամ՝ նախատեսված 191,582.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 66.1%, որով թվով 8 վարչական շրջաններում շուրջ 12,478.2 գծմ եզրաքարերի, Դավթաշեն վարչական շրջանի Կաղնուտի այգու մայթի եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար:

**16. Հենապատերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 46,337.0 հազար դրամ՝ նախատեսված 129,095.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 35.9%, որը պակաս է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 29,624.7 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատեր՝ թվով 20 հասցեներում:

**17. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,088.5 հազար դրամ՝ նախատեսված 173,548.5 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում կատարվել են Հալաբյան-Լենինգրադյան խաչմերուկի ստորգետնյա հետիոտնային անցումի և Մարշալ Բաղրամյան մետրոյի կայարանի մոտ ստորգետնյա հետիոտնային անցումի հիմնորոգման աշխատանքներ:

**18. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 86,000.0 հազար դրամ՝ նախատեսված 180,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 41 կամուրջների, էստակադաների, հետիոտն վերգետնյա անցումների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների և ուղետարերի նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները:

**19. Հրազդանի կիրճի բարեկարգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,049.4 հազար դրամ՝ նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

**20. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 127,075.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 445,779.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 28.5%, որի շրջանակներում իրականացվել են Հակոբ Հակոբյան փողոցի վերանորոգման, Նորագավիթի 1-ին փողոցի

կամրջի հարևանությամբ գտնվող տարածքի բարեկարգման աշխատանքներ, Գլենդել Հիլզ թաղամասից դեպի Գրիգոր Լուսավորիչ և Արգիշտի փողոցների ճանապարհի նոր մայրերի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի փողոցների մայրերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ

**21. Փողոցների պահպանում և շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 21,720.6 հազար դրամ՝ նախատեսված 228,550.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի որոշ փողոցների մետաղական ցանկապատերի և միջնապատերի վերանորոգման և ներկման, բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքներ, ինչպես նաև Երևան քաղաքի Աթենքի փողոցի քարաթափումների կանխարգելիչ ցանցապատման աշխատանքներ:

**22. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով** փաստացի ծախսը կազմում է 409,220.6 հազար դրամ նախատեսված (ճշտված) 445,680.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.8 %: Ծրագրի շրջանակներում 49,220.6 հազար դրամ գումար տրամադրվել է Երևանտրանս ՓԲԸ-ին որպես սուբսիդիա՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ Փարքինգ Սիթի սերվիս ՓԲԸ-ին:

**23. Թեքահարթակների կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,716.3 հազար դրամ՝ նախատեսված 23,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 40.8%, որի շրջանակներում Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների մայրերի և բազմաբնակարան շենքերի մուտքերում կառուցվել են թվով 57 նոր թեքահարթակներ:

**24. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 53,666.7 հազար դրամ՝ նախատեսված 362,336.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 14.8%, ինչի շրջանակներում 7,105.5 հազար դրամով կատարվել են անվճար հայտարարությունների տախտակների, ձուլվածքով աղբամանների նորոգման, 9574.8 հազար դրամով նստարանների ամբողջական և մասնակի վերանորոգման աշխատանքներ, 21,497.0 հազար դրամով՝ հետիոտնային կանչի լուսացույցի համար վահանակով և ուղղագիծ սյուներով ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ:

**25. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում, Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում, Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման միջոցառումներ** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 780,238.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 1,012,511.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.1%:

**26. Տրանսպորտային համակարգի արդիականացում** ծրագրով նախատեսված (ճշտված) 1,825,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 474,500.0 հազար դրամ՝, որը կազմում է 26.0%: Ծրագրի շրջանակներում ձեռք բերված թվով 100 ավտոբուսներից վճարվել է 26 ավտոբուսների դիմաց, գումարի տարբերության վճարումը կկատարվի 2021թվականի Երևան համայնքի բյուջեի շրջանակներում:

**27. Կայանատեղիների կառուցում և վերակառուցում** ծրագրով ծախս չի կատարվել:

**28. Վերելակների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,683,621.6 հազար դրամ՝ նախատեսված 5,179,200.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 51.8%, որի շրջանակներում 2,524,132.5 հազար դրամով ձեռք է բերվել 437 նոր վերելակ, որի դիմաց վճարումը պայմանագրի համաձայն կատարվել է մասնակի, իսկ 159,489.1 հազար դրամով թվով 9 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

**29. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,799,810.7 հազար դրամ՝ նախատեսված 2,801,071.0 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

30. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 628,315.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

31. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) ծախս չի կատարվել:

32. Զբոսաշրջության զարգացում ծրագրով ծախս չի կատարվել՝ կապված երկրում տիրող համավարակի և ռազմական դրության հետ:

33. Դրոշների տեղադրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 18,879.9 հազար դրամ՝ նախատեսված 45,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 42.0%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են ՀՀ դրոշների փոխման, հիմնային պատվանդանների նորոգման աշխատանքներ:

34. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով ծախս չի կատարվել:

35. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 168,100.0 հազար դրամ՝ նախատեսված 180,100.0 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և

ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

**36. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 810,833.6 հազար դրամ՝ նախատեսված 863,204.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.9%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ թվով 42 կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն): Կառավարման մարմնի պահպանում ծրագրի պարգևատրման ֆոնդից վերաբաշխման արդյունքում 237,573.7 հազար դրամ գումարը նշված ծրագրի շրջանակներում ուղղվել է Երևանի պոլիկլինիկաների աշխատակիցներին պարգևատրելուն: 298,800.0 հազար դրամն ուղղվել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին՝ համավարակի և ռազմական դրության ժամանակ ուղևորափոխադրումները պատշաճ կերպով իրականացնելու համար:

**37. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր** ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 11,303,568.0 հազար դրամ նախատեսված 3,921,000.00 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 288.3%, :

**38. Տոնական ձևավորում** ծրագրով փաստացի ծախս չի կատարվել ծրագրված 127,000.0 հազար դրամ գումարի դիմաց:

**39. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ** ծրագրով կատարվել է 28,298.7 հազար դրամի ծախս նախատեսված 49,300.0 հազար դրամի դիմաց, և կատարողականը կազմում է 57.4%: Գումարը որպես սուբսիդիա տրամադրվել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին հատակագծի կազմման աշխատանքների համար:

**40. Ներդրումային ծրագրերի իրականացման** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 99,665.6 հազար դրամ՝ նախատեսված 148,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.3%, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

**41. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,035.7 հազար դրամ՝ նախատեսված 12,302.7 հազար դրամի դիմաց, որից 4,685.7 հազար դրամը հատկացվել է թվով 3 վարչական շրջանների համատիրություններին վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց, իսկ 4,350.0 հազար դրամը՝ աղբահանության վճարի անդորրագրերի տպագրական աշխատանքների ձեռքբերմանը:

**42. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում** ծրագրով փաստացի ծախս չի կատարվել:

**43. Տոնավաճառների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83.0 հազար դրամ ծրագրված 1,035.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում իրականացվել են գյուղատնտեսական տոնավաճառի տաղավարների արդիականացման աշխատանքներ:

**44. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացում** ծրագրով ծախսը կազմել է 364,304.3 հազար դրամ 460,709.6 հազար դրամի դիմաց որն ուղղվել է Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև 106,670.0 հազար դրամ գումարը ուղղվել է Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում Արցախից ՀՀ ժամանած քաղաքացիներին Արցախ տեղափոխելու տրանսպորտային փոխադրումներին:

**45. Երևանտրանս ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղի կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,428.6 հազար դրամ՝ նախատեսված 1,428.6 հազար դրամ՝ որպես կառուցված անգարի և վլացման կետի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության պարտքի մարում:

**46. Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,173,134.0 հազար դրամ՝ նախատեսված 1,399,595.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 83.8%, որի շրջանակներում 17,356.6 հազար դրամով ձեռք է բերվել ձեռնոց, բահ, փոցխ, 405.0 հազար դրամը COVID-19 համավարակի կանխարգելման նպատակով քլորակրի ձեռք բերելուն, 467,542.4 հազար դրամով ձեռք են բերվել էքսկոլատոր բեռնիչ մեքենաներ, անիվային մինի բեռնիչ մեքենաներ, ինքնաթափ բեռնատար մեքենաներ և ավլոդ, մաքրող փոշեկուլ կոմունալ ճանապարհային մեքենաներ,

687,184.3 հազար դրամով կենցաղային թափոնի մետաղական և պոլիէթիլենային կոնտեյնների ձեռք բերմանը և 645.6 հազար դրամ տրամադրվել է խեղման նպաստ:

**47. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 374,913.2 հազար դրամ՝ նախատեսված 375,086.5 հազ. դրամի դիմաց:

**48. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման», Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» և «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրոշմանիշային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 13,904.6 հազար դրամ՝ նախատեսված 146,505.6 հազար դրամի դիմաց:

**49. «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր** ծրագրով նախատեսված 4,611,592.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4,426,271.2 հազար դրամ, կամ 96%, որն ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության աշխատանքներին:

**50. «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում** ծրագրով իրականացվել է 67,674.4 հազար դրամի ծախս՝ նախատեսված 127,197.3 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է ենթավարկային պայմանագրի մասհանման գծով պարտավորությունների կատարմանը:

**51. Զրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 130,491.2 հազար դրամ՝ նախատեսված 274,246.4 հազար դրամի չափով կամ ընդհանուր կատարողականը կազմել է 47.6%, որի շրջանակներում կառուցվել և վերակառուցվել են Արաբկիր 37,35,33 փողոցների, Ավան, Թամրուշի փողոցի, Նոր Նորքի Բ. Մուրադյան փողոցի հ. 3, 5 շենքերի և Արաբկիր, Քոչարի 1-ին նրբանցքի կոյուղագծերը, Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղատարը, ինչպես նաև կատարվել են Երևանի ԶԷԿի հարևանությամբ գտնվող

թափառող կենդանիների վարակազերծման կենտրոնի ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքներ:

**52. Գետերի հունների մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով:

**53. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով նախատեսված 4,360,049.7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3,002,031.9 հազար դրամ, որից 2,752,700.6 հազար դրամը որպես սուբսիդիա տրամադրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին որպես սուբսիդիա, 151,620.7 հազար դրամը՝ Հաղթանակ զբոսայգու և իրեն կից տարածքի (Սարալանջ) անտառապաշտպան գոտու ստեղծման աշխատանքներին: 84,786.0 հազար դրամ գումարով ձեռք է բերվել սրսկիչ, բենզինային խոտհնձիչ, տրակտոր և մեքենայի բազայի վրա տեղեկուպիկ ավտովերելակ: Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերի համար <<Նոր Բարեկարգում>> ՓԲԸ-ին հատկացվել է 12,924.0 հազար դրամ:

**54. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,379.0 հազար դրամ՝ նախատեսված 24,141.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 72.0%, որի շրջանակներում թվով 7 վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակրան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

**55. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,658.7 հազար դրամ՝ նախատեսված 14,120.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 25.9%, որի շրջանակներում Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

**56. Թափառող կենդանիների վնասազերծում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 183,693.2 հազար դրամ՝ նախատեսված 234,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.3%, որի շրջանակներում վնասազերծվել է շուրջ 3,700 կենդանի, որից ստերջացվել է մոտ 3100, քնեցվել շուրջ 345 և որդեգրվել 85 կենդանի:



57. Երեւան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ՝ աշխատանքների իրականացում ծրագրով ծախսը կազմում է 210,722.7 հազար դրամ՝ նախատեսված 406,928.6 հազար դրամի դիմաց:

58. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,990.0 հազար դրամ՝ նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 59.8%, որի շրջանակներում 12 վարչական շրջաններում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին:

59. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 27,084.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 27,662.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.9%, որն ուղղվել է վերաբնակեցված բնակիչների համար բնակարանների վարձակալության համար:

60. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդում ծրագրով նախատեսված 90,000.00 հազար դրամ գումարի դիմաց ծախս չի կատարվել:

61. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,145,883.3 հազար դրամ՝ նախատեսված 2,156,579.4 հազար դրամ գումարի դիմաց, որից 2,124,862.3 հազար դրամ գումարը հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին (աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ):

62. «Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ), «Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» (պատվիրակված լիազորություններ), և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ

**իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերի փաստացի ծախսը կազմել է 124,868.9 հազար դրամ նախատեսված 267,204.1 հազար դրամի դիմաց:

63. **Շենքերի գեղարվեստական լուսավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,026.9 հազար դրամ՝ նախատեսված 17,975.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 66.9%, որն ամբողջությամբ ուղղվել է Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի խաչմերուկում շենքերի LED տեսակի լուսավորության կառուցմանը, ինչպես նաև առկա նեոնային ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

64. **Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,900.0 հազար դրամ՝ նախատեսված 12,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 32.5%, որն ուղղվել է վթարային շենքերի սեյսմիկ հետազոտման և ինքնակամ կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին և սողանքի առաջացման ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններին:

65. **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 632,836.2 հազար դրամ՝ նախատեսված 942,424.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.1%, որի սահմաններում մայրաքաղաքի վարչական շրջաններում (բացառությամբ Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջանների) մասնակի կամ ամբողջական վերանորոգվել են 352 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներ, ինչպես նաև 10 վարչական շրջաններում հիմնանորոգվել են Նար Դուսի 4, Մաշտոցի 6, Խորենացի 20, Պարոնյան 11, Տպագրիչների 8, Դեմիրճյան 40, Ա. Պետրոսյան 6, Նար-Դու 36-ա, Քաջազնունի 8, Աբովյան 26, Հանրապետության 71, Աճառյան 20, Դավթաշեն վարչական շրջանի 3 ռդ թաղամաս 6րդ հանրակացարանի, Ադոնցի 3, Միկոյան 13, Մամիկոնյանց 54, Կոմիտաս 51/1, Լվովյան 7, Մոլդովական 32, Օրբելի 33ա, Նուբարաշենի խճուղի 5/3, Վարդաշեն 2-րդ փողոց հ.2, Էրեբունի փողոց 7, Նոր Արեշ 15 փողոցի 5 շենքերի թվով 24 թեք տանիքներ, ինչպես նաև 106,148.8 հազար դրամով գնվել է տանիքների նորոգման համար շին. նյութ, և 19,100.0 հազար դրամով համատիրություն-

վարչական շրջան համագործակցության շրջանակներում մասնակիորեն վերանորոգվել են մի շարք շենքերի տանիքներ:

**66. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում**

ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 938,650.8 հազար դրամ՝ նախատեսված 1,593,021.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 58.9%, որից 120,193.4 հազար դրամի շրջանակներում համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում իրականացվել են բակային տարածքների պահպանման ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև 707,995.0 հազար դրամը ուղղվել է բակերի ընթացիկ նորոգմանը, կառուցմանը և հիմնանորոգմանը, որից 55,798,0 հազար դրամով թվով 31 մանկական խաղահրապարակներում տեղադրվել են ռետինե հատակներ, իսկ 105,957.6 հազար դրամով բակային տարածքներում տեղադրվել են նստարաններ և զրուցարաններ: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի շուրջ 54 բակերում:

**67. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 724,619.4 հազար դրամ՝ նախատեսված 897,412.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 80.7%, որի շրջանակներում 658,779.0 հազար դրամով վերանորոգվել կամ մասնակի նորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով 749 շքամուտքեր, աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով մուտքերի նորոգման աշխատանքներ են իրականացվել նաև համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում ուղղակի պատվերի կամ անհրաժեշտ նյութերով ապահովելու եղանակով՝ 54,278.1 հազար դրամ գումարի շրջանակներում ճակատային մասերի նորոգման և լվացման աշխատանքներին: 9,425.1 հազար դրամով իրականացվել է Ռայնիսի փողոցի հ. 1 շենքի փլուզված 5-րդ մուտքի քանդման և ապամոնտաժման աշխատանքներ, 1,567.1 հազար դրամով իրականացվել է Բագրատունյաց 34 շենքի ճակատային պատերի հիմնանորոգում:

**68. Ջրային կառույցների շահագործում և պահպանում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 240,000.0 հազար դրամ՝ նախատեսված 280,000.0 հազար դրամ գումարի դիմաց, որն ուղղվել է թվով 33 ջրային կառույցների պահպանմանը:

69. **Կաթսայատների պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,680.5 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

70. **Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,161.0 հազար դրամ՝ նախատեսված 85,390.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 33.0%, որի սահմաններում հիմնանորոգվել են Աջափնյակ, Նոր Նորք, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների շենքերի շուրջ 128 վթարային պատշգամբ:

71. **Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 112,102.7 հազար դրամ՝ նախատեսված 202,600.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 55.3%: Ծրագրի սահմաններում ձեռք է բերվել և տրամադրվել Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին 11 անուն թվով 134 բժշկական սարքավորում:

72. **Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 174,717.8 հազար դրամ՝ նախատեսված 250,306.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 69.8%, որի շրջանակներում կատարվել են Շտապօգնություն ՓԲԸ-ի Դավթաշեն հ. 2 ենթակայանի շենքի, Արաբկիր հ. 1 ենթակայանի շենքի և Էրեբունի հ. 4 ենթակայանի շենքի հիմնանորոգման աշխատանքներ:

73. **Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,250.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի սահմաններում թվով 150 սոցիալապես անապահով բնակիչներ անվճար անցել են կոմայուտերային տոմոգրաֆիայի և 100 բնակիչներ՝ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն:

74. **Աջակցություն առողջապահական կազմակերպություններին** ծրագրով ծախս չի կատարվել՝ նախատեսված է 45,000.0 հազար դրամի դիմաց:

75. **Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 36,498.9 հազար դրամ՝ նախատեսված 135,529.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 26.9%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2020 թվականին իրականացվել են մի շարք սպորտային միջոցառումներ:

76. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 625,570.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 829,094.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 75.5%, որից 25,842.0 հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 15,753.3 հազար դրամը Հաղթանակ զբոսայգու Անմար կրակի գազամատակարարման, իսկ 1,878.1 հազար դրամը՝ Երևանի 2800-ամյակի այգու ջրամատակարարման ծառայությանը: Ծրագրի շրջանակներում բարեկարգվել և կառուցվել են Աջափնյակ վարչական շրջանի Արմենիա բժշկական կենտրոնի հարակից ային, Մարգարյան փողոցի և Նազարբեկյան Հ/Ա Գ-3 թաղամասի հանգստի գոտիների արտաքին լուսավորության ցանցը, Նորք Նորք վարչական շրջանի Գայի արձանի շրջակայքը, կառուցվել է Նոր Նորքի 8 զանգվածի 21 շենքի հարակից այգին և 6րդ զանգվածի կասկադատիպ համալիրի հարակից հանգստի գոտին, Նուբարաշեն վարչական շրջանում կառուցվել է ամֆիթատրոն: Կատարվել են Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի բարեկարգման աշխատանքներ, 16-րդ թաղամասի 2-րդ շրջայի բակի հիմնանորոգման աշխատանքներ, Մ.Սարյանի անվան պուրակի վերականգնման աշխատանքներ և Քանաքեռ ՀԷԿ զբոսայգու բարեկարգման աշխատանքներ: 2,940.8 հազար դրամի շրջանակներում կատարվել են այգիներում նստարանների, լուսավորության նորոգման աշխատանքներ:

77. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,322.7 հազար դրամ՝ նախատեսված 49,500.0 հազար դրամի դիմաց:

78. Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում և պահպանում ծրագրով ծախս չի կատարվել:

79. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 593,059.6 հազար դրամ գումար, որից 559,891.5 հազար դրամն ուղղվել է Երևանի համայնքային թվով 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

80. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 276,701.8 հազար դրամ՝ նախատեսված 325,043.1 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների պահպանման համար 266,368.8 հազար դրամ, իսկ 10,333.0 հազար

դրամը հատկացվել է Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեից «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար:

**81. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 460,285.8 հազար դրամ՝ նախատեսված 479,948.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.9%՝ թվով 13 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

**82. Մշակութային միջոցառումների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 119,334.2 հազար դրամ՝ նախատեսված 641,699.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 18,6%, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների կողմից կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից հիմնականներն են Հայոց բանակի օր, Կանանց տոն, Թատրոնի համաշխարհային օրվան նվիրված <<Արտավազդ>> փառատոն , Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված միջոցառման տեխնիկական սպասարկում:

**83. Կենդանաբանական այգու ցուցադրություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 302,772.1 հազար դրամ և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

**84. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 144,209.0 հազար դրամ՝ 150,451.3 հազար դրամի դիմաց՝ որն ուղղվել է թվով 5 կազմակերպությունների պահպանմանը:

**85. Թատերական ներկայացումներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 460,203.8 հազար դրամ՝ նախատեսված 514,973.4 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

**86. Թատրոնների հիմնանորոգում** ծրագրով նախատեսված 137,702.3 հազար դրամ գումարի դիմաց կատարվել է 99,892.6 հազար դրամ վճարում, որն ուղղվել է Հ.Ղափլանյանի անվան թատրոնի դահլիճի բեմի լուսային և ձայնային համակարգի վերազինման և հարդարման սենյակների ու մասամբ սրահի օդափոխության աշխատանքներին:

**87. Հուշարձանների վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,865.5 հազար դրամ՝ նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր

կատարողականը կազմել է 63.3%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

**88. ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում** ծրագրով նախատեսված 60,014.0 հազար դրամ գումարի դիմաց ծախս չի կատարվել: 2021թ. նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պատվիրվել են:

**89. Անդամակցության վճարներ ծրագրով** փաստացի ծախսը կազմել է 16,749.7 հազար դրամ՝ նախատեսված 20,399.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82.1%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիային (LUCI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպությանը և Հայաստանի համայնքների միությանը հատկացվող գումարները:

**90. Նախադպրոցական ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,219,498.1 հազար դրամ՝ նախատեսված 9,081,925.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 79.5%, որի շրջանակներում փաստացի հաճախող երեխաթվի սկզբունքով ֆինանսավորվել է թվով 161 մանկապարտեզ: Մանկապարտեզները ֆինանսավորվել են փաստացի ծախսի հաշվարկների հիման վրա՝ պայմանավորված արտակարգ դրության հետ: 46,704.8 հազար դրամն ուղղվել է մանկապարտեզների համար անհրաժեշտ ախտահանիչ նյութերի, ջերմաչափերի ձեռքբերմանը, 410.1 հազար դրամը՝ թիվ 175 դպրոցի նախակրթարանի համար սննդի ձեռքբերմանը:

**91. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 72,159.75 հազար դրամ 150,000.0 հազար դրամ գումարի դիմաց: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է սալօջախներ շուրջ 10230 ավսե և թվով 5145 կաթսա, դույլ ու թեյնիկ:

92. **Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,605.4 հազար դրամ՝ նախատեսված 34,821.7 հազար դրամ գումարի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել է «Երևանի հ.175 դպրոց» ՊՈԱԿ-ը:

93. **Հանրակրթական ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,682,321.5 հազար դրամ՝ նախատեսված 17,896,296.6 հազար դրամ գումարի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 153 դպրոցները:

94. **Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,740,090.3 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 4,312,265.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 86.7%, որից՝ որպես ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 62,595.8 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 3,677,494.5 հազար դրամը ուղղվել է թվով 74 երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, շախմատի դպրոցների ֆինանսավորմանը: Կատարողականի ցածր տոկոսը պայմանավորված է համաճարակի կանխարգելման նպատակով կրթական հաստատությունների փակմամբ, ինչպես նաև հեռավար կրթությամբ:

95. **«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ)** փաստացի ծախսը կազմել է 7,547.8 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձնահատկությունները:

96. **Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 142,358.7 հազար դրամ՝ նախատեսված 142,358.7 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 26 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:



**97. Արտադարձական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 42.775.8 հազար դրամ՝ նախատեսված 58,943.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 72.6%, որի շրջանակներում իրականացվել են Երևանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն ՀՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքներ, Պատանի հանդիսատեսի թատրոն ՊՈԱԿ-ի լուսամուտների փոխարինման աշխատանքներ և Է. Իսաբեկյանի թանգարանի վերանորոգման աշխատանքներ:

**98. Նախադարձական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,564,623.0 հազար դրամ՝ նախատեսված (6շտված) 2,556,887.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 61.2%, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Նոր Նորք վարչական շրջանի թիվ 98, 99, 104, 112, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76, 88, 90, 97, Կենտրոն վարչական շրջանի թիվ 20, 21, Աջափնյակ վարչական շրջանի թիվ 35 մանկապարտեզներում, թիվ 150, 116 46 մանկապարտեզներում իրականացվել են ջեռուցման համակարգի առանձնացման աշխատանքներ:

**99. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,268.0 հազար դրամ՝ նախատեսված 48.500.0 հազար դրամի չափով, որի շրջանակներում իրականացվել է «Ուսուցչի օր», մանկավարժների խրախուսում, առարկայական օլիմպիադաներ, համաքաղաքային միջոցառումների մասնակցություն, հորելյանական և այլ միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում 5,1790 հազար դրամի սահմաններում նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ որոշակի առարկաների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առավել ակտիվ 12 դպրոցներ պարգևատրվել են նոթբուքներով, շուրջ 400 աշակերտներ արժանացել են դիպլոմների:

**100. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում**

**ծրագրով (պատվիրակված լիազորություններ)** նախատեսված 40,789.3 հազար դրամի դիմաց ծախսը կատարվել է 100%-ով:

101. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսված 6,777.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել՝ COVID-19 համաճարակի տարածումը կանխարգելելու համար:

102. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 18,639.8 հազար դրամ՝ նախատեսված 28,941.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64.4%:

103. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 62,210.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 92,043.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 68.6%, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2020 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող անձանց, ինչպես նաև կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, մատուցվել են բաղնիքի ծառայություններ, տոնական և հիշատակի օրերին աջակցություն է ցուցաբերվել բնակչության համապատասխան խմբերին և այլն:

104. Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,935.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 8,289.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 83.7%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 7 հասարակական կազմակերպությունների:

105. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի ներդրման իրականացում, Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում, Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերության և ձեռներեցության ծրագրերի իրականացում, Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում, Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն և Հայրենադարձ և փախստական

**ընտանիքներին աջակցություն** ծրագրերով ծախս չի իրականացվել նախատեսված 377,400.0 հազար դրամ գումարի դիմաց:

**106. Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն** ծրագրով նախատեսված 143,676.0 հազար դրամ գումարի դիմաց ծախսը կազմել է 7,940.4 հազար դրամ, որի շրջանակներում ձեռք են բերվել տնտեսական ապրանքներ:

**107. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 325,956.7 հազար դրամ՝ նախատեսված 361,962.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 90.1%: Բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 273-Ն որոշմամբ սահմանված կարգով:

**108. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 644,300.4 հազար դրամ՝ նախատեսված 694,595.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.8%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի աշխատակիցները ապահովվել են սոցիալական փաթեթով:

**109. Առողջության ապահովագրություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 278,457.1 հազար դրամ՝ նախատեսված 683,730.3 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, ՔԿԱԳ, ՍԾՏԲ աշխատակիցները, «Երևանտրանս» ՓԲԸ վարորդները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը, «Կառավարման տեխնոլոգիաներ» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման հիմնարկ»-ի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, ինչպես նաև Երևանի ենթակայության մանկապարտեզների, շախմատի դպրոցների, գրադարանների, թատրոնների և թանգարանների աշխատակիցները:

**110. ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ծրագրով** հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային

Ֆոնդի ծախսը կազմել է 4,016,087.3 հազար դրամ, որից 119,686.2 հազար դրամը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 26.12.2019թ. N 3002373 ակտի համաձայն՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» Համայնքային կառավարչական հիմնարկից գանձվող եկամտային հարկ, տույժ և տուգանք, 200,000.0 հազար դրամը՝ ք. Ստեփանակերտին հրթիռակոծության հետևանքով խաթարված ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքների համար, 200.0 հազար դրամը՝ «Բժշկական Գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ-ին ԴՆԹ թեստավորման՝ հայրության որոշման համար: Տարբերությունը ուղղվել է Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրին:

Ֆոնդային մասի պահուստային ֆոնդի ծախսը կազմել է 25,141.5 հազար դրամ, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի և «Ինժեզարանտ» ՍՊԸ-ի միջև 25.01.2018թ. կնքված N ԵԲ-ՄԲՄԱՊԶԲ-18/14 բնակարանների գնման պայմանագրի համաձայն Արցախի 4 նրբանցք 8 և 10 չորրորդ աստիճանի վթարային շենքի բնակիչների համար կառուցված Սիսակյան 3 հասցեում բնակարանների դիմաց մնացորդային գումարի վճարմանը:

Վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս գումար չի հատկացվել:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեն կատարվել է 9,063,520.6 հազար դրամ հավելուրդով նախատեսված (ճշտված) 16,366,857.1 հազար դրամ պակասուրդի դիմաց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ